

ՍԱՂՄՈՍ 22

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տառապանքի աղաղակ և փառա- բանության երգ	Չարչարանք, փառաբանություն և Մեսիայի սերունդը	Մահացու հիվանդությունից ազատվելու աղոթք (Ողբ)	Տառապանքի աղաղակ և փառաբանության երգ	Ուղիղ մարդու տառապանքը և հույսը
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը, Այելեթ- հաշահարի վրա (Արևածագի եղնիկը)				
22:1-5	22:1-2 22:3-5	22:1-2 22:3-5	22:1-5	22:1-2 22:3-5
22:6-8	22:6-8	22:6-8	22:6-8	22:6-8
22:9-10	22:9-11	22:9-11	22:9-11	22:9-11
22:11-18	22:12-13 22:14-15 22:16-18	22:12-13 22:14-15 22:16-18	22:12-13 22:14-15 22:16-18	22:12-13 22:14-15 22:16-18
22:19-21	22:19-21p 22:21q	22:19-21ս 22:21բ-24	22:19-21	22:19-21
22:22-24	22:22-24		22:22-24	22:22-23 22:24
22:25-31	22:25-26 22:27-28 22:29 22:30-31	22:25-26 22:27-28 22:29-31	22:25-26 22:27-28 22:29-31	22:25-26 22:25-26 22:27-31

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՎՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հերմենևտիկական ուսումնասիրությունը պահանջում է, որ ժամանակակից մեկնաբանները լրջորեն մոտենան հեղինակի սկզբնական մտադրությանը, որպես ցանկացած ուղերձի ճիշտ նշանակության հասկացողության հիմնավորման ելակետ: Մովորաբար սա դժվար է այս սաղմոսում:

1. MT ներածականների ներշնչված լինելու անհայտությունը (այսինքն՝ առկա չեն Մեռյալ Ծովի Գալարներում):
2. մանրամասները չեն համապատասխանում Դավիթ Թագավորի կամ ՀԿ-ի որևէ մեկ այլ անձի կյանքի հետ:
3. Խաչի վրա Հիսուսի ունեցած վերապրումների խիստ նմանությունը (տես՝ Մատթ. 27:46, Մարկոս 15:34):

Բ. Հետևաբար ինչպե՞ս պետք է արդի մեկնաբանները դասակարգեն այս սաղմոսը:

1. տիպաբանությամբ (այսինքն՝ ՀԿ-ում մի դեպք, որը զուգահեռվում է Հիսուսի կյանքի հետ)
2. կանխասված մարգարեություն
3. մարգարեության բազմակի իրականացմամբ
4. պատմական իրադարձություն (պոեզիայի տեսքով) ՀԿ-յան մի անձի փորձառության

Գ. Գոյություն ունեն մի քանի յուրահատուկ տարրեր, որոնք չեն կարող հաշտվել ՀԿ-յան սաղմոսերգուի պատմական միջավայրի հետ:

1. խաչելությունը (այսինքն՝ «ծակեցին», տես՝ Սաղմ. 22:16-ի գրառումը)
2. վիճակ գցված հանդերձները
3. ազգերի ներառման հազվադեպ հայտարարությունը՝ Սաղմ. 22:27
4. հնարավոր ակնարկ՝
 - ա. հավիտենական կյանքի՝ Սաղմ. 22:26գ
 - բ. հեռացողների վրա ազդեցությունը՝ Սաղմ. 22:29
 - գ. գալիք սերունդների համար հավատարիմ հետևորդների «սերմի» ստեղծումը
5. նկատե՛ք, որ թշնամիներից վրեժխնդրության կամ հարձակման կոչ չկա

Դ. Ինչպես և բոլոր սաղմոսներին, այս սաղմոսին էլ ցուցաբերելու են պատմական, քերականական, բառապաշարային կողմնորոշմամբ մոտեցում, սակայն Քրիստոսի մահվան տեսարանն աչքի առաջ ունենալով: Սա հենց այն է, ինչ կարող են անել:

Ե. Այս Սաղմոսը մեջբերված կամ ակնարկված է ՆԿ-ում Հիսուսի խաչելության առնչությամբ: ՆԿ-ը ճիշտ ուղղությամբ է ՀԿ-ը դիտարկելու համար, և ոչ թե հակառակը: ՆԿ-ը (այսինքն՝ Հիսուսը) ամենամեծ հայտնություն է (տես՝ Մատթ. 5:17-48):

1. Սաղմ. 22:1 – Մատթ. 27:46, Մարկ. 15:34
2. Սաղմ. 22:7 – Մատթ. 27:39, Մարկ. 15:29
3. Սաղմ. 22:8 – Մատթ. 27:43
4. Սաղմ. 22:16 – Հովհ. 20:25
5. Սաղմ. 22:18 – Մատթ. 27:35, Մարկ. 15:24, Ղուկ. 23:34, Հովհ. 19:24
6. Սաղմ. 22:22 – Եբր. 2:12
7. հավանաբար Սաղմ. 22:15 – Հովհ. 19:28

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:1-5

¹Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ ինձ լքեցիր:

Հեռու մնացիր ինձ օգնելուց ու հառաչանքիս խոսքերից:

²Ո՛վ իմ Աստված, ցերեկով քեզ եմ կանչում,

Բայց Դու չես լսում. գիշերն էլ, ու լուռ չեմ մնում:

³Բայց Դու սուրբ ես, ո՛վ Իսրայելի փառաբանությունների մեջ բնակվող:

⁴Մեր հայրերի հույսը Քո վրա էր.

Քեզ հուսացին ու փրկեցիր նրանց:

⁵Քեզ աղաղակեցին ու փրկվեցին,

Քեզ հուսացին ու չամաչեցին:

22:1 Այստեղ առկա են պարբերաբար կրկնվող ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ արտահայտություններ:

1. Աստված իմ, Աստված իմ՝ Սաղմ. 22:1 (կրկնակի անգամը շեշտադրության համար է)
2. Ո՛վ իմ Աստված՝ Սաղմ. 22:2 (*Eloh*, BDB 43)
3. Ո՛վ ՏԵՐ՝ 22:19ա (ՅԱՀՎԵ, BDB 217)
4. Ո՛վ Դու, իմ օգնություն՝ 22:19բ

Սաղմոսերգուն կանչում է Աստծուն, ուղղակիորեն մեծ փափագով ու սպասումով դիմելով Նրան: Նրանք ճանաչում են միմյանց:

Միայն մի խոսք Հիսուսի այս սաղմոսի առաջին մասը խաչի վրա մեջբերելու մասին, այդ անելով Նա նկատի ունեցավ (կամ էլ ավետարանի ներշնչված հեղինակը) որ սպազայի ընթերցողները կարդան ամբողջ սաղմոսը: Միայն առաջին տողից մեջբերում կատարելը Սուրբ Գրքի ամբողջ գալարից համատեքստը մատնացույց անելու կերպ էր:

NASB, NKJV,

NRSV, NJB

TEV, JPSOA

«լքեցիր»

«թողեցիր»

Այս ԲԱՅԸ (BDB 7361 I, KB 806, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է հեռանալ կամ մերժել՝ թողնելով: ՎԱՂԱԿԱՏԱՐԸ մատնանշում է տեղի ունեցած մերժման գաղափարը: ՀԿ-ում մի քանի տեղ այս տերմինը կիրառվում է ՅԱՀՎԵԻ կողմից Իր ուխտի ժողովրդին և խոստումները թողնելու իմաստով (տես՝ Սաղմ. 119:8, Ես. 54:7, Երեմ. 7:12, Եզեկ. 8:12), սակայն փառք Աստիտուն Ծննդ. 28:15-ի համար և Եսայի 54:7-ի երկրորդ տողի համար:

Ուշադրություն դարձրե՛ք այս մերժման կամ թողնելու հենց անձնական առանձնահատկությունը (այսինքն՝ «ինձ», տես՝ Մատթ. 27:46): Սաղմոսերգուն իրեն միայնակ և մատնված էր զգում ՅԱՀՎԵԻ կողմից: Նա չէր հասկանում, թե ինչու էր այդպես: Սա կապված չէր որևէ գործած մեղքի հետ (այսինքն՝ բացթողումի կամ գործողության):

❖ Երկրորդ տողը ԲԱՅ չունի: NKJV, NRSV, REB, JPSOA տարբերակները բոլորն էլ ավելացնում են «Ինչո՞ւ ես . . .», այն դարձնելով որպես հարց: Սաղմոսերգուն «հառաչում է» (BDB 980, տես՝ Հոբ 3:24, Սաղմ. 32:3): Եբրայերեն բառը կարող է վերաբերել աշյուծի մոնչոցին (տես՝ Հոբ 4:10), սակայն այստեղ մարդկային ֆիզիկական և հոգեկան ցավին ու շփոթությանն է վերաբերում, որը լավագույնս է համապատասխանում այս համատեքստին: Սաղմոսերգուն չէր կարող հասկանալ, թե ինչու էր իր ուխտի Աստվածը մերժել ուխտի հավատարիմ անձին (տես՝ Սաղմ. 22:2):

Օտարացման, միայնության այս ահավոր զգացողությունը և հոգևոր խոստովանությունը Անկման հետևանքն է (տես՝ Ծննդոց 3): Մարդկությունը ՅԱՀՎԵԻ պատկերով և նմանությամբ ստեղծված (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8), ապականվել է: Օտարացումը սարսափելի է: Այս դեպքում ՅԱՀՎԵԻ լռությունն է շեշտադրվում, քանի որ սաղմոսերգուն ճանաչում էր Նրան: Նա չէր կարողանում հասկանալ Աստծո լռությունը և ուրիշների կողմից թշնամաբար հարձակումները: Սակայն նպատակ կար (այսինքն՝ ավետարանը, տես՝ ՄԱրկոս 10:45, 2 Կորնթ. 5:21):

22:2 Սաղմոսերգուի հաստատական աղոթքը Աստծո կողմից չի լսվում կամ առնվազն ակնհայտ կերպով չի պատասխանվում (տես՝ Սաղմ. 42:3, 88:1-2):

Սաղմոս 22:2-ի երկրորդ տողը դժվար է թարգմանել: Բառացիորեն «ինձ համար լռություն չկա»: Սա կարող էր նշանակել.

1. նա աղոթում է ամբողջ գիշեր (NKJV, REB)
2. Աստված լռում է
3. նա հանգիստ չի գտնում (LXX, TEV, JPSOA)

Եթե սա արտացոլում է Հիսուսի հետագա փորձառությունը, ապա Գեթսեմանի այգում վերջին գիշերը Իր ձերբակալությունից առաջ, լավագույնս է համապատասխանում այս տեսարանին (տես՝ Մատթ. 26:36-46, Մարկոս 14:32-42):

22:3-5 Սաղմոսերգուն Աստծուն բնութագրում է որպես՝

1. Սուրբ (տես՝ Սաղմ. 99:9)
2. Իսրայելի փառաբանությունների վրա գահակալած (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ բնակվում է *Քերուլքեների* թևերի միջև՝ Սրբության Սրբոցում ուխտի տապանակի վրա):
3. Նահապետների կողմից վտահված՝
 - ա. նրանք աղոթեցին, Նա ազատեց
 - բ. նրանք վստահեցին և չհուսախաբվեցին (այսինքն՝ գոյություն ունի ՅԱՀՎԵԻՆ վստահելու հարցում պատմական ընթացք):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՄԱՂՄՈՍ 22:6-8

**⁶Բայց ես որդ եմ, ոչ թե մարդ,
Մարդկանց կողմից արհամարհված ու ժողովրդի կողմից՝ անարգված:
⁷Բոլոր ինձ տեսնողները ծաղրում են .
Բացում են շրթունքներն ու օրորում են գլուխները՝ ասելով .
⁸ «ՏԻՐՈՉԸ հուսաց, որ կփրկի իրեն .
Դե՛ թող փրկի նրան, եթե հավանել է նրան»:**

22:6-8 Չնայած Սաղմ. 22:3-5 և անցյալում Աստծոն վստահած մարդկանց հանդեպ Նրա կատարած հավատարիմ գործերի, սաղմոսերգուն չէր զգում, որ Նա օգնում էր իրեն:

1. նա իրեն որդի պես էր զգում, Սաղմ. 22:6 (տես՝ Հոբ 25:6, Եսայի 41:14)
2. նա հանդիմանվում և արհամարհվում էր մարդկանց կողմից՝ Սաղմ. 22:6բ
3. նրանք ծաղրում էին նրան, Սաղմ. 22:7 (տես՝ Մատթ. 27:39, Մարկ. 15:29)
4. նրանք ծաղրում էին նրա հավատքը և աղոթքները, Սաղմ. 22:8

- ա. գործել (տառ.՝ «գլորել», տես՝ Սաղմ. 37:5, Առակ. 16:3) – BDB 164, KB 193, *Qal* ՀՐԱՄԱ-ՅԱԿԱՆ (տես՝ Մատթ. 27:43)
- բ. թող Նա փրկի նրան – BDB 812, KB 930, *Piel* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (տես՝ Մատթ. 27:43):
- գ. թող ազատի նրան – BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:9-10
**Պայց ինձ արգանդից հանողը Դու ես,
 Մորս կրծքիս վրա եղած ժամանակս
 Դու ես ինձ հույս տվել:
 10Արգանդից ես քեզ եմ հանձնվել.
 Իմ մոր որովայնից Դու ես իմ Աստվածը:**

22:9-10 Այս համարների տեսարանը չարչարվող արդար ծառայի նախասահմանված նպատակն է:
 1. Երբեմն անհատի համար (կիրառված Մեսիայի համար Եսայի 42:1-ում և Նրա մահվան վերաբերյալ Եսայի 52:13-53:12-ում):
 2. Երբեմն ՅԱՀՎԵԻ հավաքական ժողովրդի համար (տես՝ Եսայի 41:8-9, 42:18-19, 46:3, 49:1):
 Մա ՀԿ-յան ուխտի լեզուն է: Այն արտահայտում է Իսրայելի համար Աստծո փրկարար նպատակները (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկագործության Ծրագիրը): Սաղմոսերգուն հավատում էր, որ ինքը Աստծո ծրագրում նպատակ ուներ և չէր կարողանում հասկանալ Աստծո կողմից թվացյալ թողնված լինելը (տես՝ 2 Կորնթ. 5:21):

22:9	
NASB, REB	«ինձ ծնողը»
NKJV	«ինձ հանողը»
NRSV	«վերցրեց ինձ»
NJB, JPSOA	«քաշեց ինձ»
LXX	«դուրս հանեց»

Այս ԴԵՐԲԱՅԸ (BDB 161, KB 189) հանդիպում է ՀԿ-ում միայն այստեղ: Համատեքստը մեզ տալիս է ընդհանուր իմաստը, սակայն ստույգ նշանակությունը պետք է որ անհայտ լինի: Այնուհանդերձ, համարի ընդհանուր իմաստը հստակ է:
 ՅԱՀՎԵՆ ընդգրկված է անձի կյանքում անգամ նրա ծնունդից առաջ (տես՝ Հոբ 3:11, Սաղմ. 139:13-16, Ժող. 11:5, Երեմ. 1:5): Մարդիկ ստեղծված են Նրանով և Նրա համար: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո Հայրությունը:

22:10 Այս համարը արտացոլում է ծնունդով ուխտի ընդունելության հասկացությունը (այսինքն՝ թվատությունը): Իսրայելացիները ծնվում էին որպես ուխտի ժողովուրդ, սակայն, ճշմարիտ ուխտի հավատքը և հնազանդությունը հաստատող վկայություն էր նրանց հավատքի իրականության: Հետևաբար կային շատ իսրայելացիներ, որոնք իրապես ուխտի մարդիկ չէին (այսինքն՝ անհնազանդ էին ուխտի կանոններին, կռապաշտության մեջ էին):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:11-18
**11Մի՛ հեռանա ինձնից, քանի որ նեղությունը մոտ է,
 Քանի որ մեկը չկա, որ օգնի:
 12Չորս կողմս շատ ցուլեր պատեցին,**

Բասանի ուժեղ ցույքը ինձ շրջապատեցին:

¹³Իրենց բերանը վրաս բաց արին՝

Հափշտակող ու մռնչացող առյուծի պես:

¹⁴Չրի պես թափվեցի, ու բոլոր ոսկրերս հողերից դուրս եկան .

Սիրտս մոմի նմանվեց, հալվեց փորիս մեջ:

¹⁵Չորացավ ուժս հողե ամանի պես,

Լեզուս կպավ քիմքիս, ու Դու ինձ մահվան հողը դրիր:

¹⁶Քանի որ շները չորս կողմս պատեցին,

Չարերի հավաքը ինձ շրջապատեց .

Ծակեցին ձեռքերս ու ոտքերս:

¹⁷Իմ բոլոր ոսկրերը կարող եմ հաշվել .

Նրանք նայում ու դիտում են ինձ:

¹⁸Իմ հագուստները բաժանում են իրենց մեջ

Ու պատմուճանիս վրա վիճակ են գցում:

22:11-18 Սա բանաստեղծական պատկերներով նկարագրում է սաղմոսերգուի չարչարանքը: Բանաստեղծական մանրամասներից և գուգահեռներից շատերը պարզվեց, որ բառացիորեն Հիսուսի մերժմանը և խաչելությանն են վերաբերում:

22:11 «մի՛ հեռանա ինձնից» Այս ԲԱՅԸ (BDB 934, KB 1221, *Qal* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ՀԱՅ-ՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 22:19, Սաղմ. 71:12) կիրառվում է միջանձնային փոխհարաբերության իմաստով և ոչ թե հեռավորության: Սաղմոսերգուն միայնակ էր գգում («մեկը չկա, որ օգնի», տես՝ Ես. 63:5) իր թշնամիներին դիմակայելու (այսինքն՝ ցույքերը, առյուծները, շները, վայրի եզները): Նկատել՝ հակադրությունը, երբ նեղությունը մոտ է՝ սաղմոսերգուն ուզում է, որ ՅԱՀՎԵՆ նույնպես մոտ լինի:

22:12-13, 16-18 Նրա թշնամիները նկարագրվում են որպես՝

1. չորս կողմս շատ ցույք պատեցին՝ Սաղմ. 22:12
2. առյուծներ, որոնք հարձակվել են իր վրա՝ Սաղմ. 22:13 (այսինքն՝ լայն բացել են իրենց բերանները, որը սարսափելի հարձակման դարձվածք է):
3. շները չորս կողմս պատեցին՝ Սաղմ. 22:16
4. նրանք ակնապիշ նայում էին նրան
5. նրանք ծակեցին նրա ձեռքերն ու ոտքերը (տես՝ Հովի. 20:25, տե՛ս՝ ստորև տրված գրառումը)
6. նրանք/ես կարող եմ հաշվել իմ բոլոր ոսկրները (այսինքն՝ /1/ ՀԿ-ում սա կարող է վերաբերել չարչարվող մարդուն՝ միայն ոսկրից ու կաշվից, /2/ նա մեռած է, պատատոտվել է գազանների կողմից և միայն նրա ոսկրերն են մնացել կամ /3/ ՆԿ-ում սա կարող է վերաբերել մի մանրամասնի, որ երկու ավազակների ոտքերը ջարդվեցին, որպեսզի ավելի արագ մահով մեռնեն խաչերի վրա, սակայն Հիսուսն այս ժամանակ արդեն իսկ մահացել էր):
7. նրանք նրա հանդերձները վիճակ գցելով բաժանեցին (տես՝ Մատթ. 27:35, Դուկ. 23:34, Հովի . 19:24):

22:14-15 Սա խիստ այլաբանական լեզու է: Դժվար նշել ճշգրիտ ակնարկը, սակայն մեծ հաշվով անձը կատարյալ հուսահատության մեջ է, քանի որ՝

1. ՅԱՀՎԵՆ ակնհայտորեն բացակայում է իր կյանքում, չնայած որ սաղմոսերգուն աղաղակում է՝ հառաչում է զօր ու գիշեր
2. չորս կողմից բռնացող թշնամիներ են ներկա

3. ըստ հավանականության տեսարանը ակնարկում է հիվանդության ախտանիշներ (տես՝ Ես. 52:14) կամ մահից առաջ մարմնի վաղաժամ ապականության գործընթաց (այսինքն՝ տառա-ցիորեն «ոսկորները իրարից անջատվում են», BDB 825, KB 962):

Ապշեցնող, ցավալի, անակնկալ զգացողություն ուխտի հավատարիմ հետևորդի կողմից:

22:15

NASB, NKJV,

RSV, LXX

«**ուժ**»

NRSV, NJB,

REB

«**բերան**»

TEV

«**կոկորդ**»

JPSOA

«**եռանդ**»

UBS Տեքստային Նախագիծը տալիս է MT «իմ ուժը» (יָכֹחַ) “A” գնահատական (մեծ հավանա-կանություն): NRSV, NJB, REB և TEV տեղափոխում են բաղաձայները և ստանում «իմ քիմքը» (יָכֹחַ, KB 313, տես՝ Հոր 12:11, 20:13, Սաղմ. 119:103, 137:6, Ողբ 4:4, Եզեկ. 3:26):

NASB, NKJV,

NRSV

«**ծնոտներ**»

REB

«**լինդեր**»

TEV

«**բերանիս վերնամասը**»

NJB

«**ծնոտ**»

JPSOA

«**քիմք**»

LXX

«**կոկորդ**»

Եբրայերեն այս բառը (BDB 544 II, KB 594) ՀԿ-ում միայն այստեղ է հանդիպում: Հետևաբար համատեքստը, զուգահեռականությունը և կապակցված արմատները պետք է ապահովեն մեկնա-բանների համար հավանական նշանակությունը: Սակայն խնդրում են նկատել, որ այս բառի ստույգ նշանակությունը չիմանալու պատճառով անգամ համարի ընդհանուր իմաստը ակնհայտ է:

❖ «**Դու ինձ մահվան հողը դրիր**» «Դու» դերանունը այստեղ պետք է որ վերաբերի ՅԱՀՎԵԻՆ: ՅԱՀՎԵՆ (այսինքն՝ տիեզերքում միակ պատճառականությունը) թույլ է տվել, որ սաղմոսերգուն հասնի մահվան (այսինքն՝ ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ, տես՝ Սաղմ. 104:29):

Սա համապատասխանում է ՆԿ-յան Հիսուսի սարսափելի, փոխանորդական մահվան հասկա-ցության հետ, որպես ՅԱՀՎԵԻ կողմից նախասահմանված կամք (տես՝ Ղուկ. 22:22, Գործք 2:23, 3:18, 4:28, 1 Պետ. 1:20):

Հիսուսը մարմնացավ մի քանի նպատակով՝

1. կատարելապես հայտնելու Հորը
2. կատարելապես հայտնելու Նրա փրկագործության ծրագիրը (այսինքն՝ Ավետարանը)
3. մեր փոխարեն մեռնելու՝ մեր մեղքի համար
4. մեզ ցույց տալու, թե ինչ լինելու համար են մարդիկ ստեղծվել

Շատ կարևոր են ՀԿ-յան նմանատիպ տեքստերը մեկնաբանելը, որպեսզի երևա ՆԿ-ի ամբողջական և կատարյալ հայտնությունը: ՆԿ-ը ՀԿ-ի կատարյալ իրականացումն է (տես՝ Մատթ. 5:17-48): Պատ-մությունը լիարժեք կերպով հասկացվում է միայն Հիսուսի՝ Մեսիայի մեջ:

NASB, NKJV,

RSV

«**նրանք ծակեցին**»

NRSV

«**ճգմեցին**» (աքքադերեն արմատ)

TEV	«պատռեցին»
LXX	«փորեցին» կամ «հանեցին»
NJB, NEB	«թալանել»
JPSOA	
(տես՝ Ես. 38:13)	«առյուծների պես (նրանք ջարդում են, տես՝ Սաղմ. 22:13)»
REB (ծանոթագրություն)	«կապեցին»
NET Աստվածաշունչ	«առյուծների նման վայր նետեցին»

Այս համարը ուղղակիորեն չի մեջբերվում ՆԿ-ի Ավետարաններում Հիսուսի խաչելության տեքստերում: Այս Սաղմոսի մի քանի այլ համարներ մեջբերվում են: Իրական հարցն այն է, թե «Ի՞նչ է երբայերենը ասում»:

1. UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 198) տալիս է «առյուծի պես» (אֲרֵי, BDB 71) “B” գնահատական:
2. «Փորել», «ծնել» կամ «ծակել» ԲԱՅԸ բխում է ԾԴ –ից, BDB 468 II (միայն այստեղ է):
3. «Կապված» ԲԱՅԸ բխում է հունարեն Aquila, Symmachus, Չերոմի լատիներեն թարգմանության և երկու երբայերեն MSS թարգմանություններից (տես՝ UBS ձեռնարկը, էջ՝ 221): Նրանք կարծում են, որ արմատը ԴԴ է, BDB 501, KB 497, սակայն չկան ՀԿ-յան դրա օրինակները:
4. Գլխոն Արչերի *Աստվածաշնչի դժվարությունների հանրագիտարան* գրքում տե՛ս մի հետաքրքիր տեխնիկական գրառում, էջ՝ 37-ում:

Սովորաբար ծակվելու գաղափարը վերաբերում է պատերազմում սրով կամ գեղարդով դաժան մահվանը (մի քանի տարբեր արմատներ, սակայն երկու մարգարեական առումով նշանակալի):

1. Չաք. 12:10 – BDB 201, KB 230 (տես՝ Հովհ. 19:37, Հայտն. 1:7):
2. Ես. 53:5 – BDB 319, KB 320:

Այս բառի անորոշությունը (այսինքն՝ հազվադեպ է, ՀԿ-ում միայն աստեղ է նշվում) թույլ է տալիս, որ վերջինս արտահայտվի թե՛ ՀԿ-յան և թե՛ ՆԿ-յան իմաստով: Այս Սաղմոսը պետք է որ իմաստ ունենար իր օրերի մեջ, սակայն ակնհայտորեն մատնանշում է ավելին՝ մինչև իսկ Քրիստոսի սարսափելի, փոխանորդական քավությունը (այսինքն՝ մեխերը, որոնք ծակեցին Նրա ձեռքերն ու ոտքերը): ՀԿ-ի շատ տեքստերի ամբողջական նշանակությունը պարզաբանվում՝ բացահայտվում է միայն Քրիստոսի մեջ (այսինքն՝ տիպաբանությունը կամ ուղղակի՝ անմիջական կանխատումը): Ես կարծում եմ, որ հենց Հիսուսը Էմմաուսի ճանապարհին երկու աշակերտներին այս տեքստերը ցույց տվեց Իր չարչարանքների և հարության վերաբերյալ (տես՝ Ղուկ. 24:13-43) և նրանք էլ պատմեցին վերնատանը գտնվողներին: Հենց այդ ժամանակ էր, որ Նա հայտնվեց նրանց և ցույց տվեց Իր ձեռքերն ու ոտքերը (տես՝ Ղուկ. 24:36-43):

22:14-15, 17 Այս համարները նկարագրում են, թե ինչպես է չարչարվող՝ հարձակման ենթարկված հեղինակն իրեն զգում:

1. ջրի պես թափվեցի
2. բոլոր ոսկորներս հողերից դուրս եկան
3. սիրտս մոմի նմանվեց
4. ուժս (կամ «քիմքս») չորացավ (հավանաբար սա կապ ունի խաչի վրա Հիսուսն Իր վերջին խոսքերն ասելուց առաջ զինի՝ քացախ վերցնելու հետ, տես՝ Մատթ. 27:48, Մարկ. 15:36, Հովհ. 19:29):

Հայտնի չէ, թե ինչպես կամ եթե Սաղմ. 22:17ա կապ ունի Սաղմ. 22:14բ-ի հետ: Մենք գործ ունենք երբայերեն պոեզիայի զուգահեռականության հետ: Հիշե՛ք, որ սա արձակ չէ: Սա փոխաբերական լեզու է: Չգուշացե՛ք փոքր մանրամասները աստվածաբանություն դարձնելուց, եթե դա չի կատարվում ներշնչված ՆԿ-ի հեղինակի կողմից:

22:16 «չարերի հավաք /խումբ/» «Խումբ» բառը (BDB 417) նշանակում է հավաք կամ ժողովը: Սաղմոս 22:22 և 25-ում միևնույն հասկացության համար կիրառվում է տարբեր բառ (BDB 874): Ինչպիսի՜ մեծ հակադրություն կա այս երկու ժողովքների միջև:

1. չար մարդիկ չար նպատակներով են հավաքվում
2. աստվածավախ մարդիկ վկայության և երկրպագության նպատակներով են հավաքվում (տես՝ Սաղմ. 1:5):

Դուք ո՞ր հավաքի մասն եք ուզում կազմել:

22:18 ՀԿ-ում սա պետք է որ վերաբերեր պատերազմի ավարին, որը բաժանվում էր հաղթողների միջև: Նկատելք, որ ՀԿ-ում չկա դրան զուգահեռ հաստատված: ՆԿ-ում այն վերաբերում է այն փաստին, որ հռոմեացի զինվորներին, որոնք իրականացնում էին խաչելությունը, թույլատրված էր դատապարտյալի ունեցվածքը բաժանել իրենց միջև, որպես հավելյալ պարտավորություններ կատարելու վարձք:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:19-21

- ¹⁹Բայց Դու, ո՞վ ՏԵՐ, մի՛ հեռանա ինձնից,
Ո՞վ իմ գորություն, ինձ օգնության շտապիր .
²⁰Փրկի՛ր իմ անձը սրից, ու միամորիկիս՝ շան գորությունից:
²¹Փրկի՛ր ինձ առյուծի բերանից,
Քանի որ ինձ լսեցիր միեղջերուների եղջյուրներից»:

22:19-21 Սաղմոս 22:19 կապում է 22:11-ի հետ: ՀԱՅՅԱԿԱՆԻՆ (տես՝ ստորև տրված գրառումը) հաջորդում են ԽՆԴԻՐԱՆՔԻ երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ:

1. ինձ օգնության շտապիր – BDB 301, KB 300, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 38:22, 40:13, 70:1,5, 71:12, 141:1
2. փրկիր իմ անձը – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. փրկիր ինձ – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այս պարբերությունը ավարտվում է «ինձ լսեցիր» *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՈՎ (BDB 772, KB 851), որն ակնարկում է, որ սաղմոսերգուն եկել է այն համոզման, որ ՅԱՀՎԵՆ կպատասխանի իրեն (տես՝ Սաղմ. 34:4, 118:5, 120:1):

Դարձյալ ուշադրություն դարձրե՛ք, թե սաղմոսերգուն ինչպիսին է բնութագրում իր թշնամիներին՝

1. սուրը (այսինքն՝ «պատռված» շների կողմից հոշոտվելուց, տես՝ Սաղմ. 22:16)
2. շների գոմոցը (տես՝ Սաղմ. 22:16)
3. առյուծների երախը (տես՝ Սաղմ. 22:13, 35:17)
4. վայրի եզների եղջյուրները (գորության խորհրդապատկերը, տես՝ Հոր 39:9-10)

22:19 «մի՛ հեռանա» Տես՝ Սաղմ. 22:11-ի գրառումը

22:20 «սրից» Դժվար է ստույգ իմանալ, թե ինչ խնդիրներ, նեղություններ, թշնամիներ էր դիմակայում սաղմոսերգուն:

1. հիվանդություն
2. ապստամբություն
3. հարձակում

Հիսուսի կյանքի հետ շատ առնչությունների պատճառով կարծում եմ, որ «սուրը» այլաբանական լեզու է (տես՝ Սաղմ. 37:12-15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:22-24

²²Քո անունը պատմելու եմ եղբայրներիս,

Հավաքի մեջ գովելու եմ Քեզ:

²³Ո՛վ ՏԻՐՈՋԻՑ վախեցողներ,

Օրհնեցե՛ք Նրան . դուք բոլորդ՝ Հակոբի զավակներ,

Փառաբանեցե՛ք Նրան, ու Իսրայելի ամբողջ սերունդը վախենա Նրանից:

²⁴Քանի որ չանարգեց ու չարհամարհեց տառապյալի տառապանքը,

Ո՛չ էլ դեմքը թաքցրերց նրանից .

Այլ երբ աղաղակեց Նրան, Նա լսեց:

22:22-24 Ինչ որ իմաստով այս պարբերությունը ընդհանուր եզրեր ունի Սաղմ. 22:25-31-ի հետ: Երկուսն էլ խոսում են ՅԱՀՎԵԻ վկայության և փառաբանության վերաբերյալ՝ պաշտամունքի միջավայրում (այսինքն՝ հավաքը, Սաղմ. 22:22, մեծ հավաքը՝ Սաղմ. 22:25): Տարբերությունը օգնության շրջանակն է:

1. Սաղմ. 22:22-24 – տառապյալ

2. Սաղմ. 22:25-31 – աշխարհը

22:22 Կան երկու ԸՂՁԱԿԱՆ ԲԱՅԵՐ:

1. պատմելու եմ – BDB 707, KB 765, *Piel* ԸՂՁԱԿԱՆ

2. փառաբանելու եմ – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

22:23 Նկատեք զուգահեռականությունը:

1. ո՛վ ՏԻՐՈՋԻՑ վախեցողներ

2. դուք բոլորդ՝ Հակոբի զավակներ (տառ.՝ սերունդը)

Նրանք պետք է՝

1. օրհնեցե՛ք Նրան – BDB 237, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. փառաբանեցե՛ք Նրան – BDB 457, KB 455, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

3. թող վախենա Նրանից – BDB 158, KB 185, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

4. Երբ տառապյալը կանչեց Նրան օգնության համար, Նա լսեց (BDB 1033, KB 1570, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ)

Սաղմոսերգուն այժմ զգում է, որ ՅԱՀՎԵՆ լսել է իր օգնության աղաղակը և կպատասխանի (տես՝ Սաղմ. 22:21, 22-24): Սա Սաղմ. 22:1-2, 8, 11, 19-ի հակադարձն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 22:25-31

²⁵Քեզ եմ փառաբանելու մեծ հավաքում .

Իմ ուխտերը Նրանից վախեցողների առջև եմ կատարելու:

²⁶Հեզերն ուտելու ու կշտանալու եմ .

ՏԻՐՈՋՆ եմ գովելու Նրան փնտրողները:

Ձեր սիրտը հավիտյան է ապրելու:

²⁷Հիշելու եմ ու ՏԻՐՈՋՆ եմ դառնալու երկրի բոլոր ծագերը,

Ու Քո առջև երկրպագելու եմ բոլոր ազգատոհմերը:

²⁸Քանի որ ՏԻՐՈՋՆ է թագավորությունը,

Ու Նա է տիրում ազգերի վրա:

²⁹Երկրի բոլոր պարարտները ուտելու ու երկրպագելու եմ .

Ամեն մի հողն իջնող Նրա առջև է ընկնելու .

Եվ ոչ ոք չի կարող իր անձը կենդանի պահել:

³⁰Սերունդը ծառայելու է Նրան,

Այն ՏԻՐՈՋ առջև ազգ է համարվելու:

**31^ԻՆրանք գալու են և Նրա արդարությունն են պատմելու այն ժողովրդին,
Որ ծնվելու է, թե այս բանը Նա՛ էր, որ կատարեց:**

22:25-26 Միջավայրը պաշտամունքի միջավայր է, հավանաբար խորանի՝ տաճարի (այսինքն՝ «ուխտերը կատարել» և «ուտել ու կշտանալ»): Երկրպագուները բնութագրվում են որպես «տառապյալ» (BDB 776) Սաղմ. 22:24-ից: Նրանք այն մարդիկ են, որոնք՝

1. փնտրում են ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 22:26 – BDB 205, KB 233, *Qal* ԴԵՐԲԱՅ
2. փառաբանում են ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 22:26 – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

22:26 «Զեր սիրտը հավիտյան է ապրելու» Այս ԲԱՅԸ (BDB 310, KB 309, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ) արտացոլում է Իսրայելի, Հուդայի Թագավորների համար կիրառվող ընդհանուր մի դարձվածք: Սաղմոսերգուն թագավոր է: Կարծես թե Սաղմոս 22:28-31-ում առկա է ներդաշնակություն ուխտի Աստծո և Իր արքայական ներկայացուցչի միջև (այսինքն՝ Մեսիայի, տես՝ 2 Թագ. 7:1-17):

22:27 Տիեզերական շեշտադրությունը ապշեցնող և անսխալական է:

1. երկրի բոլոր ծագերը (տես՝ Եսայի 45:22, 49:6, 52:10, 66:23, Երեմ. 16:19, Միք. 5:4)
2. բոլոր ազգատոհմերը (տես՝ Ծննդ. 12:3, Գործք 3:25, Գաղ. 3:8):

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչ են անելու ազգերը.

1. հիշելու են ՅԱՀՎԵԻՆ – BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. դառնալու են ՅԱՀՎԵԻՆ – BDB 996, KB 1427, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (այս ԲԱՅԸ հաճախ կիրառվում է ապաշխարության համար):
3. երկրպագելու են Քո/Նրա առջև - BDB 1005, KB 295, *Hishtaphel/Hithpalel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 66:4, 86:9:

22:28 Տիեզերական շեշտադրության պատճառը տրված է: Սա միշտ էլ եղել է ՅԱՀՎԵԻ ցանկությունը: Սա հստակ ակնարկ է Ծննդ. 1:26-27-ի և միաստվածության աստվածաբանական հաստատությունը:

1. թագավորությունը ՅԱՀՎԵԻՆ է պատկանում (տես՝ Սաղմ. 47:7-9, 67:4, Աբդ. 1:21, Չաբ. 14:9)
2. Նա տիրում է ազգերի վրա (տես՝ Սաղմ. 47:8, 1 Մնաց. 16:31):

22:29 Այս համարը դժվար է թարգմանել: Բառացիորեն այն կլինի՝

«բոլոր նրանք, ովքեր լիարժեք ուժ ունեն, պիտի ուտեն և խոնարհվեն,
բոլոր նրանք, ովքեր մահվան դռան առջև են, որոնց հոգին թուլացած է, իրենց ծնկները
կխոնարհեն Նրա առջև» (JPSOA):

Ակնհայտ հակադրություն կա հարուստ և աղքատ՝ մահացող անձի միջև: Համարի շեշտադրություն այն է, որ բոլորը, ամեն տեղ երկրպագելու են ՅԱՀՎԵԻՆ՝ Նրա Մեսիային: Կարո՞ղ ենք արդյոք այս համարը դիտարկել որպես հանդերձյալ կյանքի համար ուսմունք: ՆԿ-ում այս Սաղմոսի կիրառության լույսի ներքո, որը խոսում է Հիսուսի մահվան մասին, հնարավոր է դիտարկել վերը նշված իմաստով (տես՝ Դուկ. 23:39-43):

Հնարավոր է հարց առաջանա, թե արդյո՞ք Սաղմ. 22:29-ը որևէ կապ ունի Փիլ. 2:10-ի հետ: ՆԿ-ը այն դեպքում է, որ մի օր ամեն ծունկ ձռելու է:

1. կորածները
2. փրկվածները

Դատաստանի ժամանակ այս խոնարհումը կորածների համար հավատքի դրսևորում չէ, այլ արդար դատաստանի գիտակցման քայլ:

NASB, NKJV	«անգամ նա, ով չի կարող իր անձը կենդանի պահել»
NRSV	«և ես նրա համար եմ ապրելու»
NJB	«նրանք, որ մեռած են»
REB	«Սակայն ես հանուն նրա եմ ապրելու»

MT արտացոլված է NASB-ում, որը UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 200) գնահատում է “C” (բավականին կասկածելի): LXX արտացոլվում է NRSV-ում, որը պարունակում է երկու բաղաձայնների շտկում:

22:30-31 Հավատքի նոր սերունդ, ընտանիք, ժառանգություն է գալու այս սարսափելի չարչարանքների իրադարձությունից հետո: Նրանք ծառայելու են Չարչարվողին և հոշակելու են Նրա արդարությունը, այսինքն՝ անմեղությունը:

22:31	
NASB	«Նա կատարեց դա»
NKJV	«Նա արեց սա»
NRSV	«նա արեց սա»
TEV	«ՏԵՐԸ փրկեց իր ժողովրդին»
NJB	«նա իրագործեց դա»
LXX, JPSOA,	
NRSV, REB	«ՏԵՐԸ գործեց»

ԲԱՅԸ (BDB 793, KB 889, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱԲ) խոսում է մի ավարտված առաջադրանքի մասին (տես՝ 1 Թագ. 26:25, Դան. 8:24): ՆԿ-ի կիրառության լույսի ներքո, սա վերաբերում է Գողգոթայում մարդկության փրկությանը (տես՝ Հռոմ. 5:12-21), վկայված և հաստատված դատարկ գերեզմանով (տես՝ 1 Կորնթ. 15:1-28):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է այս Սաղմոսը՝ կանխատեսություն, տիպաբանություն, թե՞ բազմակի իրականացմամբ մարգարեություն:
2. Թվարկե՛ք այս սաղմոսի և Հիսուսի մահվան միջև հավանական կապերը:
3. Սաղմոսերգուն իր թշնամիներին անվանում է մի քանի կենդանիների անուններով: Թվարկե՛ք դրանք:
4. Ինչո՞ւ են կասկածներ առաջացել Սաղմ. 22:16-ում «ծակեցին» բառի շուրջ:
5. Բացատրե՛ք Սաղմ. 22:22-ում տրամադրության փոփոխությունը:
6. Ինչո՞ւ է Սաղմ. 22:27-29 աստվածաբանորեն այդքան կարևոր: